

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՆԱՐԱՐ»

ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇՂԱՐՇԻԿԻ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը	13
1.2 Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	18
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	23
2.1 Ռելիեֆ, երկրաձևաբանություն	23
2.2 Շրջանի կլիման	26
2.3 Մթնոլորտային օդ	30
2.4 Ջրային ռեսուրսներ	31
2.5 Հողեր	33
2.6 Բուսական և կենդանական աշխարհ	36
2.7 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	39
2.8 Անտառային ռեսուրսներ	41
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	42
3.1 Ենթակառուցվածքներ	42
3.2 Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	46
3.3 Պատմության, մշակութային հուշարձաններ	48
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	50
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	55
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	61
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	63
Օգտագործված գրականության ցանկ	66

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ **Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը**

«ՆԱՐԱՐ» ՍՊ ընկերությունը (պետական գրացման համար՝ 273.110.1341594, գրանցման ամսաթիվ՝ 14.09.2023, գտնվելու վայրը՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՏՊԱԳՐԻԶՆԵՐԻ փ., շ. 13, բն.47) նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարում Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի 2.93հա տարածքում, նպատակ ունենալով պարզաբանել տեղամասի տուֆերի համապատասխանությունը «Պատքարեր լեռնային ապարներից: Տեխնիկական պայմաններ» ԳՈՍՏ 4001-2013 ԳՈՍՏ-ի, իսկ տուֆերի արդյունահանման թափոնները՝ «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից» ԳՕՍՏ 22263-76 պահանջներին: Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Թալին խոշորացված համայնքի Շղարշիկ գյուղական բնակավայրի սահմաններում, գտնվում է բնակավայրից մոտ 400-450մ հեռավորության վրա (նկար 1-3):

Եղնիկ բնակավայրի շինությունները գտնվում են հայվող տարածքից 0.7կմ, Իրինդ բնակավայրի շինությունները՝ 2.0կմ, Կաթնաղբյուր բնակավայրի շինությունները՝ 2.4կմ հեռավորությունների վրա: Տ-1-39 տեղական նշանակության ավտոճանապարհը անցնում է Հյուսիսային տեղամասից 72-470մ հեռավորության վրա: Հայցվող տեղամասի հարակից տարածքներում շահագործվում և հետախուզվում են մի շարք հանքավայրեր և տեղամասեր, որոնց տեղադիրքը և անվանումները ներկայացված են նկար 4-ում: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող՝ արոտավայր: Հայցվող տարածքը սահմանափակող եզրային կոորդինատները (ըստ ArmWGS-84 համակարգի) ներկայացված են ստորև.


Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
1	4475247.0	8411144.0
2	4475312.0	8411160.0
3	4475398.0	8411237.0
4	4475484.0	8411315.0

Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
5	4475464.0	8411389.0
6	4475377.0	8411344.0
7	4475294.0	8411294.0
8	4475228.0	8411266.0

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ARAGATZOTN MARZ

Մարզկենտրոնը ԱՇՏԱՐԱԿ
3 քաղաք, 117 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 498կմ

ASHTARAK the center
3 cities 117 settlements
Instate roads 496km



◆ Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվել տարածք


Նկար 1.

Ի Բ Ա Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

(հատված K-38-124-Դ-ր թերթից)

Մասշտաբ 1:25000


Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

— Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք

Նկար 2.



Նկար 3.



Նկար 4.

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ստորին պլիոցենից մինչև չորրորդական հասակի բազմատիպ ապարներ, որոնց ստրատիգրաֆիական կտրվածքն ըստ Վ.Ամարյանի ներքևից վերև ներկայացված է հետևյալ կերպ.

Ստորին պլիոցեն - Ըստ Վ.Ամարյանի այս հասակին են պատկանում Արտենի լեռան լիպարիտա-պեռլիտա-վանակատային լավաները, ինչպես նաև Աղինբարձրաշենյան հրաբխածին-բեկորային հզոր հաստվածքը: Արտենի լեռան լավային ապարները մերկանում են շրջանի հարավ-արևմտյան մասում, ներկայացված քարտեզի սահմաններից դուրս: Հիմնականում ներկայացված են լիպարիտներով և պեռլիտներով, իսկ վանակատն ու պեմզաներն ունեն երկրորդական նշանակություն:

Աղին-բարձրաշենյան հաստվածքի ապարները մերկանում են շրջանի հյուսիս արևմտյան մասում (քարտեզի սահմաններից դուրս) ներկայացված են տուֆաբրեկչիաներով և տուֆոկոնգլոմերատներով, որոնք հերթափոխվում են անդեզիտներով և մասնակիորեն անդեզիտաբազալտներով, իսկ հիմքում կանաչամոխրագույն կավերով և ավազաքարերով:

Վերին պլիոցեն - Ներկայացված է բացառապես հրաբխային ապարներով, որոնք գրավում են ընդարձակ մակերես: Այս հաստաշերտի ստորին մասը ներկայացված է թթու կազմի 20-30մ հզորությամբ պեմզա-մոխրային առաջացումներով, որոնք ծածկված են անդեզիտաբազալտներով:

Ստորին չորրորդական – Ներկայացված է անդեզիտային և անդեզիտադացիտային կազմի հզոր լավային ծածկոցով, որոնք լայն տարածում ունեն վերին Թալին քաղաքի շրջանում և մերկանում են վերջինիս հյուսիսային, հյուսիս-արևմտյան մասում ընդարձակ տարածության վրա: Անդեզիտադացիտները ներկայացնում են ոչ պինդ, համեմատաբար ծակոտկեն ու փխրուն ապարներ, որոնց գույնը ըստ խորության սովորաբար փոխվում է: Ծածկոցի վերին մասում դրանք մուգ մոխրագույնից մինչև սև գույնի են, դեպի ներքև անցնելով մոխրագույնի ու բաց մոխրագույնի: Դրանց մակերեսը ինտենսիվ լվացված է և անհարթ է, ներկայացված քարքարոտ բլրատիպ ռելիեֆի ձևով:

Միջին չորրորդական – Ներկայացված է հիմնականում արթիկի տիպի հրաբխային տուֆերով, որոնք առանձին տեղերում անցնում են պեմզաների: Հրաբխային տուֆերը համատարած ծածկոցների և առանձին անկանոն ձևի տուֆակուտակների ձևով ծածկում են ստորին չորրորդականի անդեզիտների և անդեզիտադացիտների հողմահարված և մասամբ լվացված մակերեսները, լցնելով հին ռելիեֆի ցածրադիր մասերը: Դրանք ներկայացնում են մոխրավարդագույն, մանուշակագույն երանգների ծակոտկեն, միատար ապակենման ապար պեմզայի, հրաբխային խարամի, ինչպես նաև այլ հրաբխային ապարների ներփակումներով:

Մանրադիտակի տակ ապարի ստրուկտուրան բյուրեղաքարաբեկորային է, կազմված պլագիոկլազների (անդեզին-լաբրադոր), պիրոքսենների (ավգիտ, հիպերոգեն), երբեմն բիոտիտի բեկորներից, ամրացված ապակենման, երբեմն մանրաբյուրեղային ցեմենտացնող մոխրագույն զանգվածով: Դրանց հզորությունը հասնում է 10-15մ:

Միջին չորրորդական կտրվածքը ավարտվում է ակալային անդեզիտադաջիտների և դաջիտների (Դավթաշեն և Սանաշեն գյուղերի շրջակայքը) փոքր հզորության լավային ծածկոցներով:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են հիմնականում պյուվիալ-պրոյուվիալ և դեյուվիալ նստվածքներով՝ կավեր, կավավազներ, կոպճավազներ և այլն: Դրանք շրջանում ունեն սահմանափակ տարածում և ոչ մեծ հզորություն (0.1-ից 2մ) և միայն Արտենի լեռան ստորոտներում այն հասնում է մինչև 10 մ:

Շրջանում նկատվում են մի շարք հրաբխային խարամի կոների ելքեր, որոնք պատկանում են Արագած լեռան հրաբխային կառույցներին: Դրանց թվին է պատկանում Կաթնաղբյուրի կառույցը, որը գտնվում է ներկայացվող տուֆերի երևակումից հարավ Կաթնաղբյուր գյուղի մոտ:

Շրջանը գրեթե ամբողջությամբ ծածկված է հրաբխային և բերվածքային առաջացումներով, ուստի առայժմ դրա տեկտոնիկայի մասին կան միայն կանխատեսումային տվյալներ:

Տեկտոնական կառուցվածքում առանձնացվում են 2 հիմնական խոշոր կառուցված-քային հարկեր, որոնց միջև նկատվում է կտրուկ տեկտոնական անհամաձայնություն:

Ստորին տեկտոնական հարկը ներկայացված է Արագածի հրաբխային զանգվածի հիմքը կազմող մինչպլիոցենյան ծալքավորված կոմպլեքսով, որի տարբեր հորիզոնների վրա համարյա հորիզոնական տեղադրված են վերին կոմպլեքսի պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխային առաջացումները, տարբեր կազմի լավաներ, տուֆեր, տուֆափշրա-քարեր, ինչպես նաև լճային, լճագետային նստվածքները: Պլիոցենի հրաբխային ապարները ներկայացված են Ողջաբերդի (ստորին պլիոցեն) և Արագածի (վերին պլիոցեն) շերտախմբերով:

Ողջաբերդի շերտախմբի ապարները լայն տարածում ունեն Արտենի լեռան լանջերին՝ ներկայացված են լիպարիտներով, պեռլիտներով և օբսիդիաններով, իսկ Արագածի շերտախմբի անդեզիտաբազալտների հոսքերը տարածված են Բառոժ գյուղի շրջակայքում և ներքին Թալին, Կաթնաղբյուր գյուղերի հատվածում:

Նորագույն տեկտոնական շարժումները (պլիոցեն-չորրորդական) Արագած լեռան ծայրամասերում առաջացրել են մի շարք անտիկլինալային գմբեթաձև

բարձրացումներ, ուղեկցված հարակից տեղամասերի սինկլինալային և այլ իջվածքներով:

Վերին պլիոցեն և ստորին չորրորդականի լավաները, ինչպես նաև դրանց հարող լճային և լճագետային նստվածքները որոշ տեղամասերում առաջացնում են հարթ, ուռուցքային, գմբեթաձև, ալիքաձև և այլ առաջացումներ:

Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասը տեղադրված է Արագածի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան լանջի սարավանդային մասում և զբաղեցնում է 2.93 հա տարածք:

Սույն հետախուզական աշխատանքների տեղամասի երկրաբանական կառուցվածքը բավականին պարզ է: Դրանում մասնակցում են հետևյալ ապարները լիթոլոգիական կտրվածքը (ներքևից-վերև) .

- Անդեզիտադացիտներ, դացիտային տուֆեր: Ստորին չորրորդական:
- Հրաբխային տուֆեր: Միջին չորրորդական:
- Ժամանակակից նստվածքներ:

Անդեզիտադացիտները մերկանում են տեղամասի տարբեր մասերում հատկապես Եղնիկ, Կաթնաղբյուր և Ակունք գյուղերի շրջակայքում:

Մակրոսկոպիկ դրանք ոչ այնքան ամուր, տեղ-տեղ նույնիսկ փխրուն, մոխրագույն և մուգ մոխրագույն, գրեթե սև լավային ապարներ են: Ապարի ընդհանուր մենաքարային ֆոնի վրա առանձնանում են դաշտային շպատների ներփակումներ, որոնք դրան տալիս են պորֆիրային ստրուկտուրա:

Անդեզիտադացիտները ունեն 50-100 մ հզորություն:

Դացիտային կազմի տուֆավաները տեղամասի սահմաններում չեն մերկանում, այն ներկայացված է մուգ մոխրագույն համարյա սև խոշորապորֆիրային կառուցվածքով:

Ապարի հիմնական զանգվածի ստրուկտուրան հիալոպիլիտային է, իսկ ներփա-կումներինը՝ միկրոլիտային: Ներփակումները, որոնք կազմում են ապարի մինչև 15-20 % ներկայացված են խոշոր մինչև 3-4 մմ թեփուկավոր և պրիզմայաձև պլազիոկլազի ու պիրոքսենի բյուրեղներով և մագնետիտի անկանոն հատիկներով: Դրանց հզորությունը հանքավայրի շրջանում ըստ Վ. Ամարյանի հասնում է մի քանի տասնյակ մետրերի:

Միջին չորրորդականի հրաբխային տուֆերը տեղամասում ունեն շերտաձև տեսք, գրեթե հորիզոնական տեղադրմամբ:

Հրաբխային տուֆերը տեղամասում ներկայացված են բացառապես արթիկյան տիպի տուֆերով:

Մակրոսկոպիկ դրանք իրենցից ներկայացնում են ծակոտկեն ապակենման հրաբխային ապարներ, դաշտային շպատների ներփակումներով և բնի տեսք ունեցող տարբեր ձևի ծակոտկեն պեմզային նյութերով, որոնց չափերը հասնում է մինչև 5-6 մմ, որոնցով էլ հիմնականում պայմանավորված է ապարի գույնը: Տուֆերն այստեղ հիմնականում մոխրավարդագույն են, մանուշակագույն երանգով: Մանրադիտակի տակ արթիկյան տիպի տուֆերն ունեն բյուրեղաքարաբեկորային ստրուկտուրա:

Ապարի հիմնական զանգվածը (մոտ 50-70 %) ներկայացված է տարբեր գույնի թթու կազմի հրաբխային ապակիով, ծակոտկեն պեմզամոխրային բեկորային նյութերով: Հանքային միներալը ներկայացված է մագնետիտով: Տուֆային ծածկոցի մակերևույթային մասը մինչև 2.5-3.0մ խորությունը ներկայացված է ուժեղ ճեղքավորված, մասամբ հողմահարված տուֆերով, որոնք պիտանի չեն պատքարի արդյունահանման համար:

Օգտակար հաստվածքում տուֆերը թարմ են, թույլ ճեղքավորված: Մակրոսկոպիկ դիտարկումներով մերկացումներում տուֆերի միաձուլությունը խախտվում է հիմնականում անջատման և մասամբ տեկտոնական ճեղքերով: Դրանց մեջ գերակշռում են ուղղաձիգին մոտ տեղադրված ճեղքերը, որոնք ունեն մոտավորապես 95-1850 և 260-3300 անկման ազիմուտներ:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են հողաբուսային ծածկույթով, ավազակավերով և կավավազներով, որոնք պարունակում են տուֆերի և լավային ապարների բեկորներ:

Ժամանակակից առաջացումների հզորությունը 0.3-1.8 մետր է:

▪ ***Նախատեսվող գործունեության բնութագիրը***

Նախապատրաստական շրջան, նախագծի կազմում

Մինչ նախագծային փաստաթղթերի կազմելը պետք է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, գործող հրահանգներին և ԳՕՍՍ – երին, ինչպես նաև

կատարել երկրաբանական որոնողական աշխատանքներ, առանձնացնելով հետախուզման համար տարածքներ:

Կատարողների աշխատանքների ծախսը կազմում է.
երկրաբան - 1 մարդ - 1.0 ամիս
համակարգչային ձևավորող - 1 մարդ - 0.5 ամիս
Ընդամենը 2 մարդ 1.5 ամիս

Տոպո - երկրաբանահանույթային աշխատանքներ

Սույն նախագծով նախատեսվում է կատարվել է տեղամասի տարածքի 1 : 1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ մոտ 2.93 հա մակերեսով տարածքում: Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշտագրում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ, որի հիմքի վրա կկազմվի տեղամասի երկրաբանական քարտեզը: Մինչև նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարումը արդեն իսկ լիցենզավորված մասնագետի կողմից երևակման սահմաններում իրականացվել է 1:1000 մասշտաբի տոպոմարկշեյդերական աշխատանքներ 2.93 հա տարածքի վրա:

Հորատման աշխատանքներ

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 96 մմ -112 մմ տրամագծերով, ԳԱԶ 66 ՈԻԳԲ -1 ՎՍ տիպի ինքնագնաց հորատող սարքի միջոցով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 8 հորատանցք մինչև 20.0մ խորությամբ, ընդհանուր 160.0մ ծավալով, որը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին.

- այլուվիալ, դելյուվիալ նստվածքներ և ուժեղ ճեղքավորված ու հողմնահարված տուֆեր - IV կարգ

- թարմ, թույլ ծակոտկեն և թույլ ճեղքավորված տուֆեր – VII կարգ:

Հորատման աշխատանքները ըստ ապարների ամրության տեղաբաշխվում են հետևյալ կերպ.

Ստորև բերվում է հորատման աշխատանքների ծավալները:

Աղյուսակ 1.

Հ/Հ	Հորատանցքի համարը	Նախագծային խորությունը, մ	Ըստ ապարների կարգերի	
			IV	VII
1	2	3	4	5
1	Հորատանցք թիվ 1	20.0	1.5	18.5
2	Հորատանցք թիվ 2	20.0	2.0	18.0
3	Հորատանցք թիվ 3	20.0	2.5	17.5
4	Հորատանցք թիվ 4	20.0	3.0	17.0
5	Հորատանցք թիվ 5	20.0	2.5	17.5
6	Հորատանցք թիվ 6	20.0	3.0	17.0
7	Հորատանցք թիվ 7	20.0	2.0	18.0
8	Հորատանցք թիվ 8	20.0	2.5	17.5
Ընդամենը		160.0	19.0	141.0

Հորատող հաստոցի տեղակայում տեղահանում

Նախագծով նախատեսվում է I-ին խմբի 8 հորատանցքերի հորատում, ԳԱԶ 66 ՈՒԳԲ -1 ՎՍ մակնիշի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 8 տեղակայում և տեղահանում:

Հետախուզական փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում - 160.0մ
- փորձնական բացահանքի փաստագրում - 50.0 մ:

Փորձնական բացահանքի անցում

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ լեռնային զանգված 875.0մ³

ընդհանուր ծավալով (50.0մ x 7.0մ x 2.5մ), որից 150.0մ³ թարմ չհումնահարված տուֆերից: Նշված աշխատանքների ընթացքում կճշտվի հումքի արդյունահանման և տեղափոխման ընթացքում կատարված ծախսերը, որոնք կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում:

Նմուշարկում

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 28 հանուկային նմուշ մինչև 5.0 մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար:

Լաբորատոր ուսումնասիրություններ

Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում: Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 30 նմուշներով, քիմիական կազմի վերլուծությունները 2 և պետրոգրաֆիական ուսումնասիրությունները 2 նմուշների միջոցով:

Հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ

Հետախուզվող տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ:

Հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն

Հաշվի առնելով տեղամասի ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան բարվոք ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Աշխատանոցային աշխատանքներ

Դաշտային աշխատանքների ավարտից հետո, լաբորատոր ուսումնասիրությունների դրական արդյունքների դեպքում նախատեսվում է կատարել

աշխատանոցային աշխատանքներ երկրաբանական հաշվետվության (պաշարների հաշվարկում) և հանքավայրի արդյունահանման նպատակահարմարության ՏՏՀ-ի կազմում, որոնք կներկայացվեն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ընդերքի վարչության քննարկմանը: Նշված աշխատանքները կատարելու համար պետք է՝

- Ինժեներ երկրաբան - 1 մարդ - 2 ամիս
- Լեռնային ինժեներ - 1 մարդ - 0.5 ամիս
- Համակարգչային ձևավորող - 1 մարդ - 0.5 ամիս:

Օգտակար հանածոյի ռադիոմետրիական ուսումնասիրություններ

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում և հորատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ հորատանցքերից ստացված հանուկի ամբողջ երկայնքով և փորձնական բացահանքի ճակատային մասով՝ СРП-68-01 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Աշխատանքների անվտանգության տեխնիկայի ապահովումը

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի հրահանգի բոլոր պահանջները:

Հողերի ռեկուլտիվացիա

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է փորձնական հանույթի ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո լանդշաֆտի վերականգնման նպատակով բացահանքի տարածք լցված և հարթեցված փուշտա շերտիառաջացումները ծածկել հողաշերտով: Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողաբուսական շերտի ծավալը կազմում է 105.0մ³ (50.0մ x 7.0մ x 0.3մ):

Հորատման հարթակներ չեն կառուցվելու, իսկ հաստոցի տեղակայման վայրերում կկատարվի փխրեցում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման և համար նախատեսվում է 248.3հազ.դրամ գումար:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Շղարշիկի տուֆերի հանքավարի Հյուսիսային տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի

գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որը կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդ. ՀՕ-110, 21.06.2014թ., խմբ. 03.05.23թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է ՀՀ ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լուսմների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 07.01.2005թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը :

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրաման, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող

արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

– ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:

– ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N°1059-Ա որոշում, որով հաստատվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և դրա միջոցառումները:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

(Ելակետային տվյալներ)

2.1 Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սողանքներ, սեյսմիկ բնութագիր


Երկրաձևաբանական տեսակետից Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված՝ սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը:

Հանքավայրի շրջանը գտնվում է Արագածի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան ստորոտին, Թալինի սարավանդի և Ախուրյան ու Արաքս գետերի միջև տեղադրված՝ Կարմրաշենի սարավանդում: Կարմրաշենի սարավանդն աստիճանաբար ցածրանալով հարավ-արևելյան ուղղությամբ՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Ունի բլրա-ալիքավոր ռելիեֆ, թույլ մասնատված մակերևույթ: Կան լավային հոսքեր, մինչև 100մ հարաբերական բարձրությամբ խարամային կոներ: Մակերևույթի կարևորագույն ձևաբանական միավորը Մաստարայի սելավաբեր համակարգի հեղեղատներն են:


Երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեությունն է: Հրաբխային համալիրները ներկայացված են անդեզիտա-բազալտներով, դացիտներով, տուֆերով և տուֆոլավաներով, որոնք ծածկված են էրոզիոն գոյացությունների հաստ շերտով: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաէրոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը: Մակերևութային գերակշռող թեքությունը կազմում է 3-5°:

Շրջանի մակերևույթի թեքության անկյունների և երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները բերվում է ստորև նկար 5 և 6-ում:


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Հյուսիսային տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.3g կամ 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 7):



Նկար 5.



Նկար 6.



Նկար 7.

Արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):


Սողանքային մարմիններ հայցվող տեղամասի տարածքում չի արձանագրվել: Համաձայն նշված տեղեկագրի, հայցվող տարածքում և հարակից շրջանում հայտնի ամենամոտ սողանքային մարմնի տեղադիրքը ներկայացված է նկար 8-ում: Հեռավորությունը հայցվող տարածքի և Arag-124-0020 սողանքային մարմնի միջև կազմում է 7.7կմ: Սողանքային մարմնի բնութագրերը ներկայացված են ստորև, աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.


Սողան- քային մարմնի ծածկագիրը	Սողանքային մարմնի կոորդին. և բարձրությունը							Չափերը		
	Latitude N			Longitude E			Բարձրությունը (մ)			
	°	'	"	°	'	"		լայն. (մ)	երկար. (մ)	մակերես (հա)
124-0020	40	29	12	43	58	24	2333	1750	2600	290

2.2. Շրջանի կլիման

Տեղամասի շրջանի կլիման չոր ցամաքային է (նկար 9): Մակերևութային բարձրությունների մեծ տատանումների շնորհիվ կլիմայական պայմանները ցածրադիր և բարձրադիր մասերում բազմազան են՝ (հուլիսի միջին ջերմաստիճանը կարող է տատանվել +6-ից +24°C): Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է +20-ից+24°C միջակայքում: Առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել +34°C: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -14-ից -26°C միջակայքում: Նվազագույն ջերմաստիճանը կարող է հասնել -38°C-ի: Նույն օրինաչափությամբ, լանջերն ի վեր փոխվում են մթնոլորտային տեղումների քանակը և կարող են տատանվել 400 մմ-ից մինչև 1000մմ սահմաններում: Քամիների գերակշռող ուղղությունը հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են: Մոտակա Թալին դիտակայանի տվյալներով միջին տարեկան խոնավությունը 66% է, ամենաշոգ ամսվա միջինը՝ 36%, ամենացուրտ ամսվա միջինը՝ 69% :



Նկար 8.



Նկար 9.

Ստորև 2-9 աղյուսակներում ներկայացված և տարածքի կլիմայական բնութագրերը (ըստ մոտակա Թալին օդերևութաբանական կայանների տվյալների):

Աղյուսակ 2.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հստ ամիսների											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
-5,2	-4,0	0,6	7,6	12,1	16,4	20,7	20,8	16,5	10,1	3,3	-2,9

Աղյուսակ 3.

Օդի հարաբերական խոնավությունը

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
76	75	68	65	67	61	56	55	55	64	72	77

Աղյուսակ 4.

Արևափայլի տևողությունը

Ըստ ամիսների												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Գումարային
102	130	166	178	228	293	338	326	286	216	137	102	2502

Աղյուսակ 5.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան												
Ըստ ամիսների												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
25	27	37	58	79	52	32	22	20	35	28	24	438
18	25	38	32	37	63	41	52	67	36	50	19	67

Աղյուսակ 6.

Ձնածածկույթը

Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
64	84	137

Աղյուսակ 7.

Անարև օրերի քանակը

Ըստ ամիսների												Գումարային
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
7	6	5	3	1	0.5	0.06	0.1	0.1	2	4	8	37

Աղյուսակ 8.

Քամիներ

Կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
			Ուղղությունները							
			Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
Թալին	834.9	հունվար	29	9	13	27	11	3	3	5
			2.4	2.2	2.6	2.9	2.1	2.2	2.6	3.6
		ապրիլ	22	8	13	27	15	4	4	7
			3.3	2.4	2.6	3.6	2.9	3.5	3.2	4.1
		հուլիս	31	8	9	25	12	3	3	9
			3.5	2.6	2.4	3.2	2.4	2.7	3.7	4.1
		հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7
			2.9	2.2	2.4	3.0	2.2	2.8	2.7	3.9

Անհողմությունը և ուժեղ քամիները

Ամիսներ	Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
Հունվար	50	1.5	1.9	49
Ապրիլ	33	2.2		
Հուլիս	36	2.2		
Հոկտեմբեր	42	1.8		

2.3 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի կամ հարակից Շղարշիկ, Իրինդ, Եղնիկ և Կաթնաղբյուր բնակավայրերի տարածքում չկա:

2023 թվականի հոկտեմբերի կատարվել են տեղամասի տարածքի մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկում, ինչը հիմք է հանդիսանալու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում մշտադիտարկումների իրականացման համար:

Որոշվել են փոշու, ազոտի երկօքսիդի և ածխածնի օքսիդի ֆոնային կոնցենտրացիաները: Դրանք կազմում են փոշի՝ 0.1մգ/մ^3 , ազոտի երկօքսիդ՝ 0.007մգ/մ^3 , ածխածնի օքսիդ՝ 0.3մգ/մ^3 :

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ) կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքին մոտ գտնվող Շղարշիկ և Եղնիկ բնակավայրում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցամիջ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ³:


2.4 Ջրային ռեսուրսներ

Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի շրջանի հիմնական ջրային միավորը Սելավ Մաստարան է, որի հիմնական հունը անցնում է հայցվող տարածքից ավելի քան 20կմ արևմուտք: Բուն տեղամասը ջրագուրկ է:

Սելավ-Մաստարան հանդիանում է Մեծամոր գետի աջ վտակ:

Սելավ-Մաստարա գետի երկարությունը 98 կմ է, ավազանը՝ 1580կմ²: Սկիզբ է առնում հարավ-արևմտյան լանջից, մոտ 2500մ բարձրությունից: Հոսում է դեպի հարավ, ապա՝ հարավ-արևելք: Վերին հոսանքում հունն ունի մինչև 30մ խորություն: Մնուցումը գերազանցապես անձրևային է: Ունի անկայուն, սելավային ռեժիմ, երբեմն ցամաքում է (30-50 օր): Հայտնի է 2-3 տարին մեկ կրկնվող ուժեղ ցեխաքարային սելավներով: Հյուսիսային տեղամասից 270մ հարավ-արևմուտք և 450մ հարավ-արևելք անցնում են ձորակներ, որտեղ ձևավորվող անձրևաջրերի հոսքերը բնութագրվում են սեզոնային ռեժիմով (նկար 10): 2023 թվականի հոկտեմբերին կատարված դաշտային դիտազննման ժամանակ ձորակները ջրագուրկ էին: Սելավ-Մաստարա գետի տարածքում ջրերի որակի մոնիթորինգ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից չի իրականացվում (նկար 11):

Շղարշիկ գյուղից մոտ 1.3կմ հյուսիս-արևելք գտնվում է Շղարշիկի ջրամբարը, ինչի ընդհանուր ծավալը կազմում է 97հազ.լս.մ, օգտակարը՝ 94 հազ.լս.մ, նպատակը՝ ոռոգման:



Նկար 10.



Նկար 11.

2.5 Հողեր

Հյուսիսային տեղամասի շրջանում տարածված են շագանակագույն, բարձրադիր գոտում նաև՝ քարքարոտ սակավագոր սևահողերը, ծածկված հացազգի, տարախոտահացազգի, երբեմն մարգագետնատափաստանային բուսականությամբ: Հողերի բնական տիպերի բաշխվածությունը Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի շրջանում բերված է նկար 12-ում:


Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով:

Աղյուսակ 11.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	CO ₂	գիպս SO ₄		
Մուգ-շագանակագույն	0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
	15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
	34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
	73-105	1.0	15.7	0.1	29.7	8.3
	105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4
Բաց-շագանակագույն	0-25	2.4	4.4	0.0	29.4	8.1
	25-39	1.4	8.4	0.5	28.8	8.4
	39-85	1.2	15.4	1.0	24.4	8.2

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:



Նկար 12.

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրանխոշոր կնձկային է:

Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Զգալի տարածում ունեն լեռնային սևահողերը, որոնք զարգացել են հողալկալի հիմքերով հարուստ էյուրվիալ-դեյուրվիալ և դեյուրվիալ կավավազների և կավերի վրա: Առանձնանում են կնձկահատիկային ստրուկտուրայով, ունեն չեզոք կամ չեզոքին մոտ ակտիվ ռեակցիա, միջին և ավելի մեծ կլանունակություն, ծանր մեխանիկական կազմ, բարձր ծակոտկենություն և խոնավունակություն:

Սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (рН-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հազեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Հյուսիսայն տեղամասի սահմաններում զարգացած են քարածին-բեկորային, ուժեղ քարքարոտ թույլ հումուսային հողմահարված ալրակարբոնատային սևահողերը, որոնց հզորությունը կախված ռելիեֆի առանձնահատկություններից տատանվում է 10-30սմ :

2023 թվականի հոկտեմբերին կատարվել է տեղամասի տարածքի հողերի նմուշառում՝ ծանր մետաղների և այլ աղտոտիչների պարունակությունները ուսումնասիրելու նպատակով: Պարարտանյութերի, դրանց բաղկացուցիչ տարրերի, օրգանական այլ աղտոտիչների պարունակություններ չեն արձանագրվել:

ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրամանով սահմանված աղտոտիչներից հողերում արձանագրվել է 0.15մգ/կգ պղնձի և 1.04մգ/կգ ցինկի պարունակություններ:


Բուն տեղամասի տարածքում նախկինում խախտված/վերականգնված հողատարածքներ, հանված և պահեստավորված հողաբուսական շերտ չկա :

2.6 Բուսական և կենդանական աշխարհ

Հյուսիսային տեղամասի շրջանի տարածքն անտառազուրկ է: Տիրապետում է տափաստանային բուսածածկույթը, առանձին հատվածներում դիտարկվում են կիսաապատային բուսատեսակներ (նկար 12): Տարածքում դիտարկվել են սիզախոտ սիզախոտանման (*Phleum phleoides*), բարակոտնուկ սանրավոր (*Koeleria cristata*), հավակատար հասկավոր (*Amaranthus retroflexus*), կոծուկ (*Heracleum sosnovskyi*), հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*), ոզնախոտ սովորական (*Dactylis glomerata*), խատուտիկ սովորական (*Taraxacum officinale*): Հացազգի և հացազգի-տարախոտային տափաստանները հիմնականում շյուղախոտ լեռնային տափաստաններ են՝ *Festuca valesiaca* ձևավորումները, բարակոտնուկ սանրավորի (*Koeleria cristata*), ծորնուկ խայտաբղետի (*Bromus variegata*), դաշտավլուկ սոխուկավորի (*Poa bulbosa*), սիզախոտ սիզախոտանման (*Phleum phleoides*):

Կենդանական աշխարհը սակավաթիվ է, ինչը պայմանավորված է նաև հայցվող տեղամասի հարակից տարածներում իրականացվող հանքարդյունահանման աշխատանքներով :

Ըստ գրական տվյալների և հարակից գյուղերի բնակիչների հետ քննարկումների արդյունքում ստացված տեղեկատվության՝ կաթնասուններից տարածքում հայտնի են սովորական ոզնի (*Erinaceus concolor*), նապաստակ (*Lepus europaeus*), սովորական աղվես (*Vulpes vulpes*) և գայլ (*Canis Lupus*): Բուն տեղամասում կաթնասունների բներ/որջեր չկան :



Նկար 12.

Թռչուններից շրջանում նշվել են դաշտային արտույտ (*Alauda arvensis*), գյուղական ծիծեռնակ (*Hirundo rustica*), սովորական կաչաղակ (*Pica pica*), սովորական ագռավ (*Corvus corone*) :

Միջատներից նշվել են կարծրաթևեր (*Dixus obscurus*, *Syntomus obscuroguttatus*), թերթիկաբեղավորներ (*Blitopertha lineata*), սևամարմիններ (*Opatrum geminatum*), տերևակերներ (*Entomoscelis sacra*), փղիկներ (*Psallidium maxillosum*) :

Սողուններ տեղամասի տարածքում կատարված դաշտային այցի ժամանակ չեն դիտարկվել :

Տեղամասի տարածաշրջանում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է Կարմիր գրքերի նյութերի վերլուծություն (հիմք՝ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքը <http://www.mnp.am>), ինչպես նաև ուսումնասիրվել են ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնի կողմից ստեղծված թեմատիկ օնլայն քարտեզները:

Ընդհանուր առմամբ Շղարշիկի տուֆերի հանքավայրի և Հյուսիսային տեղամասերի տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- խլոպուզ Գրոյտերի (*Merendera greuteri* Gabrielian) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայաստանի էնդեմիկ է: ամբողջությամբ ստորգետնյա: Հանդիպում է միայն Արտենի լեռնագագաթի, Թալին քաղաքի և Կաթնաղբյուր գյուղի միջև, Իրինդ գյուղի շրջակայքում: Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1500-1900 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, տրագականտային համակեցություններում, լեռնային տափաստանում: Պահպանության գործողություններ չեն իրականացվում :

- տուտղավարդ Սոֆիայի (*Alcea sophiae* Iljin) – վտանգված տեսակ: Հանդիպում է Թալին քաղաքի շրջակայքում : Աճում է միջին լեռնային գոտու ծ. մ. 1300-1800 մ բարձրությունների վրա. լեռնային տափաստաններում, չոր քարքարոտ տեղերում, ժայռերի միջև: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Հյուսիսային տեղամասի տարածքում նախնական դիտարկումների արդյունքներով խլոպուզ Գրոյտերի և տուտղավարդ Սոֆիայի բուսատեսակները չեն արձանագրվել :

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից Թալինի տարածաշրջանում (որտեղ գտնվում է Հյուսիսային տեղամասը) հայտնի է բալոբանը *cherrug J. E. Gray* (Հայաստանի համար անհետացող տեսակ) և քարարծիվ *Aquila chrysaetos* (սակավաթիվ, խոցելի տեսակ) տեսակները, որը: Բալոբանը հանդիպում են Երևանի շրջակայքում, Գավառի, Վայքի, Արարատի, Վարդենիսի, Ճամբարակի, Ստեփանավանի, Թալինի, Էջմիածնի շրջաններում, իսկ քարարծիվը՝ տարածված է համարյա հանրապետության ողջ տարածքում, խուսափում է ամբողջական անտառային զանգվածներ ից: Թռչնատեսակների բները, սովորաբար, տեղադրված են ժայռեզրերին և խորշերում: Հայտնի է բնադրում ծառերի վրա: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում, «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերում: ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված, վերը նշված թռչնատեսակը Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի սահմաններում չի դիտարկվել:

2.7. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը: Համաձայն նշված փաստաթղթի, ՀՀ Արագածոտնի մարզում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 12.

NN	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Բյուրաան գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տասիկ» քարե բնական քանդակ	Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ

1	2	3
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Սարալանջ գյուղից 4 կմ արմ
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ
11.	«Ամբերդ» լիճ	Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
12.	«Լեսինգ» լիճ	Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
13.	«Ումրոյ» լիճ	Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
14.	«Գեղարոտի» ջրվեժ	Արագած գյուղից 11 կմ հս-արմ
15.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
16.	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արտաշավան գյուղի արլ եզրին
17.	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ
18.	«Քասախի դարավանդներ»	Օհանավան գյուղի արլ եզրին
19.	«Քասախի կիրճ»	Սաղմոսավան գյուղ
20.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
21.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
22.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
23.	«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից, Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասում, հարակից Եղնիկ, Շղարշիկ, Իրինդ և Կաթնաղբյուր բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

2.8. Անտառային ռեսուրսներ

ՀՀ Արագածոտնի մարզի սահմաններում է գտնվում Արագածոտնի անտառտնտեսությունը, որը ստեղծվել է 2007 թվականին և ներկայումս բաղկացած է Արագածի, Երնջատափի և Բյուրականի անտառպետություններից: Անտառպետությունների մակերեսները կազմում են համապատասխանաբար 4402, 2824 և 3622հա:

Արագածոտնի անտառտնտեսության արտաքին սահմանները անցնում են 6 համայնքներով՝ Ալագյազ, Ծաղկահովիտ, Ապարան, Աշտարակ, Թալին և Եղվարդ: Արտաքին սահմանները սահմանակցում են նշված համայնքների գյուղատնտեսական հողատեսքերին:

Ալագյազ, Ծաղկահովիտ համայնքներում, Ապարան համայնքի կենտրոնական մասերում անտառտնտեսության արտաքին սահմանները անցնում են Ծաղկունյաց լեռնաշղթայի արևմտյան և հարավ-արևմտյան լանջերով: Ապարան համայնքի հարավում անտառտնտեսության արտաքին սահմանը անցնում է Արայի լեռան հյուսիսային լանջերով:

Աշտարակ համայնքում անտառտնտեսության արտաքին սահմանները անցնում են Արագածի հարավ-արևելյան լանջերով, Թալին համայնքում՝ Արագածի հարավ-արևմտյան լանջերով: Եղվարդ համայնքում անտառտնտեսության արտաքին սահմանները անցնում են Արայի լեռան արևելյան լանջերով:

Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասում, հարակից Շղարշիկ, Եղնիկ, Իրինդ և Կաթնաղբյուր բնակավայրերի սահմաններում անտառապատ տարածքներ չկան:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Շղարշիկի տուֆերի հանքավայրը, դրա Հյուսիսային տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում: Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևմուտքում: Մարզը հյուսիսից սահմանակից է Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ Կոտայքի մարզին, հարավում՝ Արմավիրի մարզին և ք. Երևանին, արևմուտքում պետական սահմանով սահմանակից է Թուրքիային:

Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիները՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան – Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր – Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր երկաթուղին (միայն արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում): Մարզում են գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները:

Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.1 %,
- գյուղատնտեսություն 9.3 %,
- շինարարություն 4.0 %,
- մանրածախ առևտուր 1.9 %,
- ծառայություններ 0.7 %:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գուղատնտեսությունն են: Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և խմիչքների, թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության


(հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության) և անասնաբուծության մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն Աշտարակ քաղաքը գտնվում է Քասախ գետի ափին, Երևանից 19 կմ հյուսիսարևմուտք: Քաղաքը հանդիսանում է Երևան-Գյումրի, Երևան-Սպիտակ ճանապարհների հանգույցը:

Աշտարակ քաղաքը զարգացել է որպես Երևան քաղաքի արբանյակ քաղաք: Այն մարզի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կենտրոնն է: Քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է:

Մարզի մշտական բնակչության սեռատարիքային բուրգը ներկայացված է նկար 13-ում:



Նկար 13.

Մարզի տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները ներկայացված են ստորև աղյուսակներում:

Հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների ինդեքսներ

ընթացիկ գներով
at current prices

	2019	2020	2021
Մշտական բնակչության թվաքանակը (տարեվերջին), 1 000 մարդ De jure population number (end of year), 1 000 persons	2 959.7	2 963.3	2 961.4
Համախառն ներքին արդյունքը, մլրդ.դրամ ¹ Gross domestic product, bln. drams ¹	6 543.3	6 181.9 [♦]	6 983.0
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլրդ. դրամ Volume of industrial production, bln. drams	2 091.5	2 101.1	2 419.4
Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը, մլրդ. դրամ Volume of agricultural output, bln. drams	853.3	833.3	934.4
Շինարարության ծավալը, մլրդ. դրամ Volume of construction, bln. drams	450.8	433.5 [♦]	510.9
Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ Goods turnover of general purpose transport, mln. tons-km	995.7	898.6	1 052.3
Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ Passenger turnover of general purpose transport, mln. passenger-km	2 284.2	706.6	1 072.2
Առևտրի շրջանառությունը, մլրդ. դրամ Trade turnover, bln. drams	3 280.5	2 918.8	3 464.8
Ծառայությունների ծավալը, մլրդ. դրամ Volume of services, bln. drams	1 993.4	1 721.7	1 914.9
Գործազուրկների միջին տարեկան թվաքանակը, 1 000 մարդ Average annual number unemployed, 1 000 persons	240.8	234.4	199.0
Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը ² , դրամ Average monthly nominal wages and salaries, drams ²	182 673	189 716	204 048
Արտաքին առևտրաշրջանառությունը External trade turnover			
մլն. ԱՄՆ դոլար mln. US dollars	8 175.9 [♦]	7 101.0 [♦]	8 378.2
մլրդ. դրամ bln. drams	3 923.4 [♦]	3 477.1 [♦]	4 197.3
այդ թվում՝ including:			
արտահանում export			
մլն. ԱՄՆ դոլար mln. US dollars	2 647.2 [♦]	2 537.0	3 016.0
մլրդ. դրամ bln. drams	1 270.5 [♦]	1 242.1	1 514.3
ներմուծում import			
մլն. ԱՄՆ դոլար mln. US dollars	5 528.7 [♦]	4 564.0 [♦]	5 362.2
մլրդ. դրամ bln. drams	2 652.9 [♦]	2 235.0 [♦]	2 683.0

Արդյունաբերական արտադրանքի ծավալները ըստ արտադրության բաժինների

	Հանքագործական արդյունաբերություն	Մշակող արդյունաբերություն	Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
ՀՀ	589 885.6	1 527 054.1	279 219.2	23 197.4
Արագածոտնի մարզ	2 851.3	42 870.0	5 217.6	494.9

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների

Ամբողջ արդյունաբերությունը <i>այդ թվում՝</i>	51 433.8	52 279.6	113.1
<i>Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում որից՝</i>	<i>2 851.3</i>	<i>2 940.3</i>	<i>139.6</i>
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	2 851.3	2 940.3	139.6
<i>Մշակող արդյունաբերություն որից՝</i>	<i>42 870.0</i>	<i>43 626.8</i>	<i>110.7</i>
սննդամթերքի արտադրություն	27 332.0	27 531.7	101.1
խմիչքների արտադրություն	7 679.0	8 171.5	117.6
հագուստի արտադրություն	7.4	7.4	135.2
փայտանյութի մշակում, փայտից և խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն, բացի կահույքից	13.2	13.1	81.2
պոլիգրաֆիական գործունեություն, գրատված կրիչների բազմացում	32.6	32.6	x
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	305.0	306.9	98.0
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	1 112.0	1 118.6	125.9
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	193.7	191.8	148.4
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից	49.1	48.9	88.9
համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	213.3	213.3	183.0
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	219.4	219.4	108.7
կահույքի արտադրություն	144.7	144.7	159.2
արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	5 568.6	5 626.9	163.8
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	5 568.6	5 626.9	163.8
<i>Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում</i>	<i>5 217.6</i>	<i>5 217.6</i>	<i>122.6</i>
<i>Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում</i>	<i>494.9</i>	<i>494.9</i>	<i>106.0</i>

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը

	Ցանքատարածու- թյունները, հա	Բերքատվությունը, գ/հա	Համախառն բերքը, հազ. տոննա
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	19 347	6.8	13.2
Կարտոֆիլ	1019	203.7	20.8
Բանջարաբոստանային մշակաբույսեր	19 506	271.8	619.6
Բոստանային մշակաբույսեր	86	156.0	1.3
Պտղի և հատապտղի տնարկների տարածություններ	6252	106.2	62.4
Խաղողի տնկարկներ	1509	110.0	15.2

Աղյուսակ 17.

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը

հազ.գլուխ

Խոշոր եղջերավոր կենդանիներ	Որից՝ կովեր	Խոզեր	Ոչխարներ և այծեր	Ձիեր
64.7	31.5	166.1	713.7	13.9

Աղյուսակ 18.

Անասնաբուժական հիմնական արտադրանքի արտադրությունը

Իրացվել է գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա	Կաթ, հազ. տոննա	Ձուլ, մլն. հատ	Բուրդ, տոննա
19.69	78.9	76.8	151.5

Աղյուսակ 19.

մլն.դրամ

Հիմնական միջոցների գործարկում	Շինարարություն	Շինմոնտաժային աշխատանքներ
4 499.7	20 466.3	17 965.7

Աղյուսակ 20.

Մանրածախ առևտրի համեմատական ակտիվությունը

Մշտական բնակչության թվաքանակը (միջինը), 1 000 մարդ	Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը, դրամ	Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ, %
124.5	28 831.1	231 575.1	44.9

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային տեղամասի տարածքը ներառված է Թալին խոշորացված համայնքի Շղարշիկ բնակավայրի վարչական տարածքում:

Թալին համայնքը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան փեշերին, ծովի մակերևույթից 1585 մետր բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 70 կմ, մարզկենտրոնից՝ 48 կմ:

Թալին համայնքով է անցնում Հյուսիս-Հարավ միջպետական նշանակության ավտոմայրուղին:

Թալին համայնքը նախկինում եղել է Թալինի շրջանի վարչական կենտրոնը:

Համայնքն ունի 223 188.84 հա հողատարածք, այդ թվում վարելահող 27133.11 հա, բնակավայրի նպատակային նշանակության հողեր 196055.73 հա:

Թալին համայնքի բնակչությունը 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 37626 մարդ, որից 14745–ը տղամարդիկ են, 14745 -ը՝ կանայք, երեխաներ՝ 7969:

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

0 - 4 տարեկան – 2316 մարդ

5 - 7 տարեկան – 1436 մարդ

8 -15 տարեկան 3945 մարդ

16 -62 տարեկան – 25240 մարդ

63 և ավելի տարեկան – 5578 մարդ:

Համայնքի հողօգտագործման ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 21-ում:

Աղյուսակ 21.

Համայնքի հողերն ըստ նշանակության	Հա
Համայնքի վարչական տարածքը	103 536,61
Գյուղատնտեսական հողեր	82 167,08
Արոտավայր	49 541,92
Վարելահողեր	24 406,43
Խոտհարք	268,6
Այլ հողեր	5078,23
Բնակավայրերի հողեր	6 149,35
Բնակելի կառուցապատման	4 767,33
Հասարակական կառուցապատման	140,59
Խառը կառուցապատման	27,33
Ընդհանուր օգտագործման	467,71
Այլ հողեր	746,08
Արտադրական նշանակության հողեր	284,17
Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողեր	487,58
Անտառային հողեր	1082,09
Հատուկ պահպանության	492,78
Հատուկ նշանակության	11 716,79
Ջրային	481,23

Ազդակիր Շղարշիկ գյուղը հիմնադրվել է 1921թ.-ին, Արևմտյան Հայաստանի Սասուն և Մոտկան գավառներից գաղթած հայերից:

Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 18000մ², բնակելի տներ է թիվը՝ 112:

Գյուղում գործում է հանրակրթական դպրոց:

Գյուղը գազաֆիակցված է, գործում է 2 էլեկտրական ենթակայան:

Բնակչության հիմնական մասը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ:

Բնակիչները զբաղված են նաև գյուղի շրջակայքում գործող ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման բնագավառում:

Համայնքի և Շղարշիկ բնակավայրի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Թալին համայնքի 2023-2027թթ. զարգացման հնգամյա ծրագրի, ինչը հաստատվել է համայնքի ավագանու որոշմամբ և տեղադրված է պաշտոնական կայքում¹:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Հյուսիսային տեղամասի տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով:

Տուֆերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են համայնքի բնակիչներին: Նախնական գնահատման հայտին կից տրամադրվում է նաև հանրային քննարկումների արձանագրությունը:

▪ ***Պատմության, մշակութային հուշարձաններ***


ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 29-ի թիվ 628-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Շղարշիկ բնակավայրի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձանները.

¹ <https://talin.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=1e5c50f7-fe44-456b-a62e-14ba16bec547>

Հ/Հ	Անվանումը	Ժամանակա- շրջանը	Գտնվելու վայրը
1.	Ամրոց «Ղալաչի»	մթա 2-1 հզմ	Գյուղի հս-աե մասում
2.	Հուշարձան՝ Երկրորդ Աշխարհամարտում Ձոհվածներին	1985թ.	Գյուղի մեջ

Ըստ Շղարշիկ բնակավայրի կադաստրային քարտեզի տվյալների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հողերը գտնվում են հայցվող տարածքից 0.7-1.18կմ հեռավորությունների վրա (նկար 14):



Նկար 14.

Հետևաբար, տեղամասում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շղարշիկի հանքավայրի Հյուսիսային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Տուֆերի հետախուզման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները կապված կլինեն հորատման և փորձնական արդյունահանման և ավտոտրանսպորտի շարժման հետ:

Տրանսպորտի շարժման ժամանակ 1կմ վազքի դեպքում մթնոլորտ է արտանետվելու մոտ 0.04գ/վրկ (հաշվի առնելով տրանսպորտի միջին բեռնունակությունը, տեղաշարժման միջին արագությունը, ճանապարհների վիճակը, վազքի երկարությունը, մակերեսային շերտի խոնավությունը) կամ 0.009տ :

Դիզելային վառելիքի տարեկան ծախսը կազմում է 26տ կամ 0.1տ/օր: Մեծ բեռնունակությամբ ավտոտրանսպորտի (բեռնատար և էքսկավատոր) վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներն են.

Աղյուսակ 22.

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումների քանակը, տ/տարի	Արտանետումների քանակը, գ/վրկ
CO	36.4	0.95	0.127
N ₂ O	0.122	0.003	0.0004
ՑՕՄ	8.16	0.21	0.028

Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասի տարածքում ծրագրավորված աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) և փոշու առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային ջրային հոսքեր չկան: Հարակից տարածքներում շահագործվող բազմաթիվ հանքավայրերի փորձը վկայում է, որ

տարածքում չկան նաև ստորգետնյա ջրերի հորիզոններ, ինչը կապված է տաևածքը կազմով հրաբխային տուֆերի բնական ծակոտկենության և ճեղքավորվածության հետ:

Հետևաբար, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները որևէ ազդեցություն չբային ռեսուրսների վրա ունենալ չեն կարող :

Հողային ծածկույթ.

Տեղամասի տարածքում զարգացած են 0.1-0.3մ հզորությամբ ուժեղ քարքարոտ, հողմահարված այրակարբոնատային սևահողերը: Հետախուզական աշխատանքներով խախտվելու է ընդամենը 350մ² տարածք փորձնական բացահանքի սահմաններում, որը նախատեսվում է ռեկուլտիվացնել: Հորատման հարթակների շինարարություն չի նախատեսվում: Աշխատանքների ավարտից կկատարվի հորատման հաստոցի տեղակայման վայրերի փխրեցում :

Որպես ազդեցություն հնարավոր է տեղամասի տարածքի աղտոտում նավթամթերքներով :

Ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, որոնք անհրաժեշտության դեպքում կբարեկարգվեն:

Բուսական և կենդանական աշխարհ.

Տուֆերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը Հյուսիսային տեղամասի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տեղամասի տարածաշրջանը հանդիսանում է քաղաքաշինորեն-տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտի: Եղնիկ, Շղարշիկ, Կաթնաղբյուր, Իրինդ բնակավայրերի հարակից տարածքներում շահագործվում են ոչ մետաղական օգտակար հանածոների մի շարք հանքավայրեր և տեղամասեր (նկար 4): Տարածքում առկա են բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Միաժամանակ, տարածքում արձանագրված բուսատեսակները լայն տարածում ունեն ՀՀ կիսաանապատային-տափաստանային լանդշաֆտներում, հանդիսանում են «ֆոնային» տեսակներ:

Տեղամասի տարածքում չեն դիտարկվել խոշոր կաթնասունների բներ, որջեր:

Չեն արձանագրվել նաև պահպանվող, էնդեմիկ, ՀՀ բույսերի կամ կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր.

Հյուսիսային տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: ԲՀՊ տարածքներ չկան նաև հարակից Շղարշիկ, Իրինդ և Եղնիկ բնակավայրերի տարածքում:

Տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Անտառային ռեսուրսներ.

Հայցվող տարածքում, հարակից Շղարշիկ, Իրինդ և Եղնիկ բնակավայրերում անտառապատ տարածքներ չկան:

Հետևաբար, անտառային ռեսուրսների վրա երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ դրսևորվել չի կարող:

Պատմության և մշակութային հուշարձաններ

Ազդակիր Շղարշիկ բնակավայրի պատմամշակութային հուշարձանը գտվում է Հյուսիսային տեղամասի տարածքից մոտ 0.7-1.18կմ հեռավորության վրա: Փորձնական արդյունահանման աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման աշխատանքների, հորատասեպային եղանակով: Հետևաբար, որևէ ազդեցություն պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա ազդի աշխատանքները ունենալ չեն կարող:

Աղմուկ

Համաձայն ՄՆ-245-71 սանիտարական նորմերի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական գոտի սահմանված չէ: Առանց պայթեցման աշխատանքների կիրառման քարի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանվում է 50մ սանիտարական գոտի: Հյուսիսային տեղամասի և Շղարշիկ գյուղի մոտակա բնակելի տարածքների միջև հեռավորությունը կազմում է մոտ 450մ, ինչը գերազանցում է սահմանված նորմը 9 անգամ:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ փորձնական բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման և հորատման աշխատանքները:

Տեղամասում հորատման և փորձնական արդյունահանման աշխատանքներից առաջացող գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ կազմում է 60դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$L_{Aտար} = L_{Aէկվ} - \Delta L_{Aհեռ} - \Delta L_{Aէկր} - \Delta L_{Aկանաչ}$ բանաձևով, որտեղ՝

$L_{Aէկվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $L_{Aէկվ}=60$ դԲԱ,

$\Delta L_{Aհեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta L_{Aհեռ}$ կազմում է 10դԲԱ,

$\Delta L_{Aէկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (տեղամասի ռելիեֆ), $\Delta L_{Aէկր}=10$ դԲԱ,

$\Delta L_{Aկանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta L_{Aկանաչ}=5$ դԲԱ:

Աղմուկի մակարդակը Շղարշիկ գյուղի մոտ կկազմի՝

$L_{Aտար} = L_{Aէկվ} - \Delta L_{Aհեռ} - \Delta L_{Aէկր} - \Delta L_{Aկանաչ} = 60 - 10 - 10 - 5 = 35$ դԲԱ

(նորման 45դԲԱ):

Հետևաբար, տուֆերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում ազդեցություն բնակիչների վրա չեն ունենալու:

Հայցվող տեղամասում, ինչպես նաև հարակից տարածքներում սանիտարական պահպանության գոտու սահմանում պահանջող օբյեկտներ (օրինակ՝ ջրամատակարարման աղբյուրներ) չկան:

Աղտոտումը ընդերքօգտագործման թափոններով.

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ կարող են առաջանալ հետևյալ տեսակի թափոններ.

- չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Օրեկան ծավալը՝ 1.5կգ/մարդ;

- հորատման թագիկների թափոններ, որոնք բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են: ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի ցանկում հորատման արդյունքում առաջացած հորատման թագիկների թափոններ հաշվառված չեն:

- փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջացող 620մ³ ծավալով փուշտա շերտի հողմահարված տուֆեր : Այս ընդերքօգտագործման թափոնները ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015

թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամաններին համաձայն հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Փորձնական բացահանքի անցման ժամանակ մինչև 0.3մ հզորությամբ հողաբուսական շերտը (մոտ 105մ³ ծավալով) հեռացվելու է և ժամանակավորապես կուտակվելու է փորձնական բացահանքի հարակից տարածքում, այնուհետև օգտագործվում է ռեկուլտիվացիոն աշխատանքների համար: Փորձնական բացահանքի անցման ժամանակ նախապես հեռացվող հողաբուսական շերտը թափոն չի հանդիսանում, քանի որ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշման.

- հողերի բերրի շերտը օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով,

- հողերի պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանվում և պահպանվում է,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՌԻՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր: Աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր և կատարել համապատասխան վճարումները: Կենցաղային աղբի ծավալի կրճատման նպատակով նախատեսվում է հարակից Շղարշիկ գյուղի բնակիչների հետ քննարկել սննդի մնացորդների որպես անասնակեր օգտագործման հարցը, դաշտային պայմաններում ընդմիջումների համար նախատեսված կերակուրը տեղափոխել բազմակի օգտագործման տարաներով, օգտագործել կտորից պատրաստված տոպրակներ, ջուր, թեյ, հյութ խմելու համար աշխատանքներին մասնակցող անձնակազմին տրամադրել ամուր սննդային պլաստիկից պատրաստված բազմակի օգտագործման բաժակներ:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով աշխատանքների ընթացքում ջրցանում տեղամասի ճանապարհի երկայնքով, հորատման հարթակների և փորձնական բացահանքի սահմաններում: Ըստ գործող նորմատիվների՝ 1մ^2 տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է $1,5\text{լ}$: Փոշենստեցման նպատակով անհրաժեշտ մոտ 25տ ջուրը նախատեսվում է պայմանագրային հիմունքներով գնել «Արման Պետրոսյան» ԱԶ-ից, ով Թալինի տարածաշրջանում իրականացնում է տեխնիկական ջրամատակարարման աշխատանքներ: Խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի ծախսը կազմում է $0.025\text{մ}^3/\text{մարդ}$, օրեկան 0.15մ^3 ծավալով : Այս ջուրը

նախատեսվում է գնել մոտակա բնակավայրերի առևտրի կետերից, շշալցված տարբերակով յուրաքանչյուր օր և տեղափոխել տեղամասի տարածք:

- Հորատման մաշված թագիկների հավաքում և հանձնում որպես մետաղի ջարդոն, որը իրականացվելու է հորատման ծառայություններ իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով, դատարկված փոսը նախատեսվում է լցնել քարերով:
- Խախտված լանդշաֆտի վերականգնում, ինչի նպատակով փորձնական բացահանքի անցման ժամանակ հողի վերին շերտը 105մ³ ծավալով և փուշտա շերտի առաջացումները 620մ³ ծավալով նախատեսվում է հանել, կուտակել անմիջապես բացահանքի կողքը: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո, փորձնական բացահանքի տարածք տեղափոխվելու են նախ փուշտա շերտի հողմահարված, ջարդոտված տուֆերը, փովելու են բացահանքի հատակին, այնուհետև դրանց վրա փովելու է հողաբուսական շերտը: Ռեկուլտիվացված տարածքի հողային շերտը կպարարտացվի, այնուհետև կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք: Հորատման հատոցի տեղակայման վայրերում կկատարվեն փխրեցման և պարարտացման աշխատանքներ:

Վերականգնման ենթակա փորձնական բացահանքի ընդհանուր մակերեսը կազմում է 350մ² տարածք: Նախատեսվում է նաև փխրեցնել և պարարտացնել հորատման հաստոցի տեղակայման վայրերը:

Աշխատանքների կատարման համար կհատկացվի 248.3 հազ.դրամ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար անհրաժեշտ գումարի բացվածքը ներկայացված է ստորև, աղյուսակ 23-ում:

Նշված գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան, որով սահմանվել է շրջակա միջավայրի պահպանության դրամազլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը:

Աղյուսակ 23.

h/h	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը, հազ. դր	Գումարը, հազ.դր
1	2	3	4	5	6
1.	Բուսահողի կտրում ձեռքով և պահեստավորում փորձնական բացահանքի մոտակայքում	մ ³	105	0.5	52.5
2.	Նմուշարկման և փաստագրման աշխատանքների ավարտից հետո փուշտա շերտի առաջացումների և հողային զանգվածի տեղափոխում դեպի ռեկուլտիվացիոն տարածք՝ հետլիցքով և հարթեցումով, պարարտացում օրգանական պարարտացումով	մ ³	620	0.1	62.0
3.	Փուշտա շերտի ապարների հարթեցված մակերևույթին հողի շերտի փռում	մ ³	105	0.5	52.5
4.	Սերմերի ցանք	դրամ			15.0
5.	Հորատման հաստոցի տեղակայման վայրերի փխրեցում, պարարտացում	դրամ			20.0
	Ընդամենը				202.0
6.	Անուղակի ծախսեր	5%			10.1
	Ընդամենը				212.1
7.	Այլ ծախսեր	10%			21.2
8.	Չնախատեսված ծախսեր				15.0
	Ամբողջը				248.3

- Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան: Երևական տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով՝

1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են

բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում բների հայտնաբերման նպատակով : Առկայության դեպքում, դրանց կամ դրանցում հայտնաբերված կենդանիների, թռչունների տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս :

- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար : Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից :

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ :

- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում :

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :

- Պատահական գտածոների ընթացակարգը՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

✓ պետական մարմինների ծանուցում,

✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:

Օրագրավորված բնապահպանական միջոցառումները (բնապահպանական կառավարման պլանը) ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հորատում, փորձնական արդյունահանում, տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխագազերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի վնասվածություն	Ջրացան	Տարեկան 50.0հազ.դրամ
		Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 120.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում նավթամթերքներով	Խախտված տարածքների վերականգնում	Տարեկան 248.3հազ.դրամ*
		Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում	Այս հոդվածով ծախսեր չի իրականացնելու
	Բուսածածկի խախտում փորձնական բացահանքի սահմաններում	Նավթամթերքներով տարածքի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	Տարեկան 180.0հազ.դրամ
		Խախտված տարածքների ռեկուլտիվացիա, պարարտացում, սերմերի ցանք	248.3հազ.դրամ*
		Կենսաբազմազանության մշտադիտարկում	Տարեկան 200.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում,

		պահանջների ապահովում	կատարվելու է կենսաբազմազանու- թյան դիտարկման շրջանակներում
	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների ռեկուլտիվացիա	248.3հազ.դրամ*
		Աշխատանքների իրականացում սահմանված ժամանակացույցով, տարածքից աղմուկի աղբյուր հանդիսացող տեխնիկայի դուրսբերում	Հատկացում չի պահանջում
Անձնակազմի կենսագործունե- ության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղբոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 70.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատիպ բետոնապատ անջրաթափանց գուգարանի շինարարություն	Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, 25.0հազ.դրամ
		Հորատիպ գուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Տեղամասում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Մեյամակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ): Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վագոն-տնակում:

Տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Տեղամասում տեղադրվելու է շարժական վագոն-տնակ, աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցների համար Շղարշիկ բնակավայրում վարձակալվելու է կենցաղային հարմարություններ ունեցող տուն: Սա նաև թույլ կտա նվազեցնել կենցաղային կեղտաջրերի արտահոսքը :

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Երևակման տարածքում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- աշխատանքների ընթացքում տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայրում մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- նավթամթերքներով երևակման տարածքի հողերի աղտոտվածության մշտադիտարկում (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր),
- տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասի և հարակից շրջանում),
- աղմուկի մակարդակ Շղարշիկ և Եղնիկ գյուղերի մոտ:

Մշտադիտարկման տեսակների և պարբերականության վերաբերյալ սվյալները ներկայացված են նաև աղյուսակ 25-ում:

Աղյուսակ 25.

Մշտադիտարկումների օբյեկտը և վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկման տեսակը	Նվազ. հաճախական.
1	2	3	4
Մթնոլորտային օդ (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր)	Հանքափոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր)	Նավթամթերքների մնացորդներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	ամսեկան մեկ անգամ

1	2	3	4
---	---	---	---

Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ (տեղամաս և հարակից շրջան)	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ (Շղարշիկ և Եղնիկ գյուղերի մոտ)	Չայնային բնութագիր	Չափում ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների վերահսկման և մշտադիտարկումների կետերի տեղաբաշխման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 14-ում :

Երևական տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար գումարները (տարեկան 580.0հազ.դրամ) ներառված են ընկերության շահագործական ծախսերի կազմում :



Նկար 14.

Գրականություն

1. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական կայք
8. ՀՀ Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք
9. Թալին խոշորացված համայնքի պաշտոնական կայք
10. «Заповедники СССР. Заповедники на Кавказе». Издательство "Мысль" 1990
11. Թամանյան Վ., Գաբրիելյան Է., Ֆայվուշ Գ., Հովհաննիսյան Մ., Ներսեսյան Ա., Արևշատյան Ա., Խանջյան Ն., Վարդանյան Ժ., «Հայաստանի էնդեմիկ բույսերի կարմիր ցուցակ»
12. “Флора и растительность степей Армении”, Файвуш Г.М., диссертация на соискание ученой степени доктора биологических наук, отдел геоботаники и экологии растений Института ботаники АН Республики Армения